

ղովուրդը քահանայ չունէր. հոն կ'ուզէ հաս-
տատուիլ, սակայն տեղւոյն զինուորական
կառավարութիւնը կը ստիպէ զինք անմիջապէս
սահմանէն ելլել, նա ալ Ռուսաց կողմը կ'անցնի:
Վենետիկի Աբբասայրը շնորհակալութեան
թուղթ կը գրէ Արքեպ.ին յիշեալ հիւրա-
սիրութեան համար, եւ կ'առաջարկէ իր քա-
հանաներէն ղրկել: Յաջորդ տարին, Հ. Մատա-
թիա Բիւսկիւլճեան Վիննայի վրայէն Լեմբերգ
կ'երթայ, Օդեսսա երթալու համար, Լեմբերգի
հայ Արքեպ.ը զինքը իր քահանայից դասը կը
կարգէ, եւ մօրուքն ածիլել կու տայ, վասն զի
իրենց եկեղեցականները Աւգոստինովիչ Արքե-
պիսկոպոսին օրերէն սկսեալ (1715—1751)
կ'ածիլուէին:

Հ. Մինաս կ'երթայ Օդեսսա, ուր ժողո-
վողեան ինդրանաց համեմատ կը մնայ երկու
ամիս, եւ կ'երթայ Ղարասուպաղար, ուր 200
տուն կաթողիկեայ եւ իբր 300 տուն ոչ-կա-
թողիկեայ Հայեր կային: Այս միջոցին մեր
Անտոն Արքեպ. ադմինիստրատոր էր. Անտո-
նեան Միաբանք բոլորովին մեկնած էին. Ար-
քեպ.ն ունէր միակ ծերունի պարզուկ քա-
հանայ մը: Կաթողիկէ Հայք ունէին մեծաշէն
եկեղեցի մը, փակին մէջ ժողովրդապետանոց
եւ դպրատուն՝ 25 աշակերտով, որոնց ու-
սուցիչն էր Վենետիկի վանքէն մեկնած տի-
րացու մը:

Տեղւոյն Տրապիզոնցի կաթողիկէ Հայերը
կ'ուզեն որ Հ. Մինաս մնայ այնտեղ իբրեւ